

Արձանագրություն N 4

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի
Կառավարման խորհրդի 2016թ. ապրիլի 22-ի նիստի

Ներկա էին

խորհրդի նախագահ՝ Արծվիկ Մինասյանը:

խորհրդի անդամներ՝ Գարեգին Մելքոնյանը, Մարիամ Այվազյանը, Կարեն Սահակյանը,
Կարեն Միրզաբեկյանը, Մելիտա Հակոբյանը և Արգար Մկրտչյանը:

Մասնակցում էին՝ Լևոն Խալիկյանը, Հայկ Այվազյանը, Տարոն Հակոբյանը, Արթուր
Ստոյանը, Մարինե Կարապետյանը:

Քարտուղար՝ Արմեն Կոռյան:

Օրակարգ

1. Բննարկման ենթակա հարցեր՝

Լսեցին՝

ա/ Տեսչական մարմնի 2017-2019թթ ՄԺԾԾ-ի նախագծերի հաստատում:

Ձեկուցող՝ Լևոն Խալիկյան

Արտահայտվեցին. Ա.Մինասյանը, Կ.Սահակյանը, Կ.Միրզաբեկյանը:

Առաջարկվեց՝ հաստատել ծրագիրը ծառայողական ավտոմեքենաների քանակի
վերաբերյալ նախագծում տեղ գտած տեխնիկական վրիպակը շտկելու պայմանով:

Որոշվեց՝ ծրագրի նախագիծը հաստատել:

Կողմ – 7:

Դեմ – 0:

Ձեռնպահ – 0:

Լսեցին՝

բ/ Հաստիքացուցակի կազմում և ներկայացում քաղաքացիական ծառայության խորհրդի
հաստատմանը:

Ձեկուցող՝ Լևոն Խալիկյան

Արտահայտվեցին՝ Ա.Մինասյանը, Կ.Սահակյանը, Կ.Միրզաբեկյանը:

Առաջարկվեց՝ հաստատել ՀՀ քաղաքացիական ծառայություն ներկայացված
հաստիքացուցակը:

Որոշվեց՝ հաստատել հաստիքացուցակը:

Կողմ – 7:

Դեմ – 0:

Ձեռնպահ – 0:

Լսեցին՝

գ/ Պաշտոնի անձնագրերի հաստատում:

Ձեկուցող՝ Լևոն Խալիկյան

Արտահայտվեցին՝ Կ.Միրզաբեկյանը, Ա.Մինասյանը:

Առաջարկվեց՝ հաստատել քաղաքացիական ծառայության խորհուրդ ներկայացված պաշտոնի անձնագրերը:

Որոշվեց, հաստատել պաշտոնի անձնագրերը (համաձայն որոնց պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է տեսչական մարմնի ղեկավարը):

Կողմ – 7:

Դեմ – 0:

Ձեռնպահ-0:

Լսեցին՝

ե/ Կայք-էջի կառուցվածքի ներկայացում:

Ձեկուցող՝ Սաթենիկ Ասիլյան

Արտահայտվեցին՝ Ա.Մինասյանը, Գարեգին Մելքոնյանը, Մարիամ Այվազյանը, Կարեն Սահակյանը, Կարեն Միրզաբեկյանը, Մելիտա Հակոբյանը, Աբգար Մկրտչյանը, Հայկ Այվազյանը, Տարոն Հակոբյանը, Արթուր Ասոյանը, Մարինա Կարապետյանը:

Առաջարկվեց՝ ներքոհիշյալ առաջարկությունները քննարկելու պայմանով հաստատել կայք-էջի նախագիծը.

1. Կայք-էջը վերջնական մշակելիս հաշվի առնել ՀՀ կառավարության 2015թ. 1204-Ն որոշման պահանջները:

2. Քննարկել ստուգման ընթացքում տեսչական մարմնի աշխատակիցների գտնվելու վայրը կայք-էջի միջոցով առցանց ցուցադրելու հնարավորությունը:

3. Կայք-էջում տեղադրել միայն Կառավարման խորհրդի անդամների էլ. հասցեները, հեռախոսահամարները և իրենց կայքերի /եթե կան/ հղումները:

4. Լրամշակել քաղաքացիների կայք էջի միջոցով ստացվող դիմումների ընդունման կարգը:

5. Քննարկել շարժական լաբորատորիաների լուսանկարները կայք-էջում տեղադրելու առաջարկը:

6. Քննարկել կայք-էջում վազող տողերի հանելու առաջարկը:

7. Քննարկել կայք-էջի գույներն ավելի վառը դարձնելու առաջարկը:

8. Քննարկել կայք-էջում Կառավարման խորհրդին վերաբերող բաժնում հարց ու պատասխանի պատուհան բացելու առաջարկը:

9. Քննարկել կայք-էջում բարեփոխումների խմբի վերաբերյալ քաժին/պատուհան բացելու առաջարկը:

Որոշվեց՝ առաջարկի համաձայն հաստատել կայք-էջի նախագիծը.

Կողմ – 7:

Դեմ – 0:

Ձեռնպահ 0:

Լսեցին՝

2. Տեսչական մարմնի կողմից կատարված աշխատանքների վիճակը.

Ձեկուցող Լևոն Խալիկյանի առաջարկով օրակարգի 2.1 կետի ա/ ենթակետի հարցը՝ 33 ստուգաթերթերի վերաբերյալ, ներկայացնել հաստատման, իսկ մնացած կետերն առաջարկվեց ընդունել ի գիտություն:

Արտահայտվեցին՝ Ա.Մինասյանը, Գարեգին Մելքոնյանը, Կարեն Սահակյանը, Կարեն Միրզաբեկյանը, Մելիտա Հակոբյանը, Աբգար Մկրտչյանը, Հայկ Այվազյանը, Տարոն Հակոբյանը, Արթուր Ասոյանը, Մարինա Կարապետյանը:

Առաջարկվեց՝ օրակարգի 2 կետի 2.1 և 2.2 կետերի հարցերն ընդունել ի գիտություն: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2016թ. համար նախատեսված 3 ոլորտային ստուգումները հնարավոր է իրականացնել ՀՀ լաբորատորիաների ուժերով, հաստատել ստուգաթերթերի նախագծերը՝ 2017թ. դրանց անդրադարձալու պայմանով:

Որոշվեց՝ Օրակարգի 2 կետի 2.1 և 2.2 կետերի հարցերն ընդունել ի գիտություն: Առաջարկում նշված պայմանով հաստատել ստուգաթերթերի նախագծերը:

Կողմ – 7:

Դեմ – 0:

Ձեռնպահ-0:

Լսեցին՝

Օրակարգում չընդգրկված, սակայն հրատապ քննարկման ենթակա տեսչական մարմնի ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատման վերաբերյալ հարցը:

Ձեկուցող՝ Լևոն Խալիկյան:

Արտահայտվեցին՝ Ա.Մինասյանը, Կարեն Սահակյանը, Կարեն Միրզաբեկյանը:

Առաջարկվեց՝ ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատել և ներկայացնել քաղաքացիական ծառայության խորհուրդ՝ օրենսդրական փոփոխություններից հետո դրանք վերանայելու պայմանով:

Որոշվեց՝ առաջարկի համաձայն հաստատել ստորաբաժանումների կանոնադրությունները:

Կողմ – 7:

Դեմ – 0:

Ձեռնպահ-0:

Կառավարման խորհրդի նախագահ՝

խորհրդի անդամներ՝

	Արծվիկ Մինասյան
	Գարեգին Մելքոնյան
	Մարիամ Այվազյան
	Կարեն Սահակյան
	Կարեն Միրզաբեկյան
	Մելիտա Հակոբյան
	Աբգար Մկրտչյան